Առակի ուսուցումը հիմնական դպրոցում

Ներածություն

Ժամանակակից կրթական համակարգում անհրաժեշտություն է առաջանում նորովի մատուցում հանդես բերել լեզվի ուսուցման մեթոդաբանության նկատմամբ: Նոր տեխնոլոգիաների և համացանցի օգտագործումը զգալիորեն ընդլայնում է ուսումնական նյութի որոնման, հաղորդման և յուրացման հնարավորությունները:
Ներկայումս ուսուցչին վերապահվող կարևորագույն խնդիրներից մեկը կրթության բովանդակության կազմակերպումն է: Այդ գործընթացում ուսուցիչը մի շարք այլ գործոնների հետ պետք է հաշվի առնի նյութի մատուցումը: Մատուցման նպատակադրումը պետք է լինի աշակերտակենտրոն, այսինքն՝ նպատակը պետք է լինի գիտելիքների, հմտությունների, վերլուծական մտածողության և այլ որակների զարգացումը, ոչ թե սոսկ տեղեկատվություն հաղորդելը:
Հետազոտությունը ներկայացնում է առակները և դրանց ուսուցումը հիմնական դպրոցի հինգերորդ դասարանում: Մենք ներկայացնում ենք առակը, որպես ուսուցման կարևորագույն բաղադրիչ և գիտելիքների կառուցմանը, հմտությունների ու կարողությունների ձևավորմանը նպաստող գործոն:
Հետազոտական աշխատանքի թեման է՝ **«Առակի ուսուցումը հիմնական դպրոցում»:**

Թեման արդիական է այն առումով, որ ուսումնասիրության նյութ հանդիսացող առակները քարոզում են սեր, հոգատարություն, համերաշխություն, ընկերություն և նպաստում են երեխաների ժողովրդավարական արժեհամակարգի ձևավորմանը: Այս գործերում մերժվում են սուտն ու մնացած այլ ստորությունները, որոնք իսկապես ահռելի թափ են ստացել վերջին ժամանակներում:

Ուսումնասիրության **նպատակն է** արդի մեթոդներով ներկայացնել առակների ուսուցումը հինգերորդ դասարանում: Սովորողների մեջ ձևավորել մարդկային վեհ արժեքներ՝ հարգանք, ճշտախոսություն, մեծին հարգել, լավությունը գնահատելու կարողություն: Վեր հանել հիմնական բարոյախոսական իմաստն ու խմբավորել առակներն ըստ անհրաժեշտության: Արժևորել սիրո, հայրենասիրության, բարու, ազնվության դերը և ցույց տալ դաժանության, ստի, անհնազանդության, երախտամոռության վատ հետևանքները:

Առակի ուսուցումը որքանո՞վ կնպաստի սովորողների ազգային և ժողովրդավարական արժեհամակարգի ձևավորմանը:
Առակի ուսուցումը և բարոյախոսության ճիշտ ըմբռնումը կնպաստի արժեհամակարգի, կարողունակությունների ձևավորմանը: Կօգնի դաստիարակել լավ մարդ և հասարակությանը պիտանի քաղաքացի:
Հետազոտության վերջնարդյունքները
Կարժևորվի առակի ուսուցման դերը հիմնական դպրոցում:
Առակի ուսուցումը կդիտարկվի այլ տեսանկյունից, կկիրառվեն դասավանդման ժամանակակից մեթոդներ և հնարներ:
Կներկայացվի առակների դերը անհատի զարգացման գործում:
Կպարզվի, թե առակի ուսուցումը որքանով կնպաստի սովորողների ազգային և ժողովրդավարական արժեհամակարգի ձևավորմանը:

1.Քեզ ծանո՞թ է առակ բառը:
2.Ի՞նչ գիտես առակի մասին:
3.Ի՞նչ առակներ ես կարդացել:
4.Դրանից ո՞րն է ամենից շատ դուր եկել քեզ:Ինչո՞ւ:

Առակը փոքրածավալ ստեղծագործություն է, որը խրատական բովանդակություն ունի:

Առակներում ներկայացվում են մարդկային տարբեր բնավորություններ, ծաղրվում զանազան արատներ՝ ծուլությունը, ստախոսությունը,չարությունը, պարծենկոտությունը,ագահությունը,ժլատությունը և այլն:

Առակներում հանդես եկող կենդանիների, բույսերի,տարբեր առարկաների ու բնության երևույթների միջոցով ակնարկվում են մարդիկ՝ իրենց բացասական ու դրական գծերով:

Օրինակ՝Խնկո Ապոր <<Մկների ժողովը>> առակի հերոսներն իրականում մկները չեն,այլ այն մարդիկ,որոն ք միայն փրկության ծրագրեր են առաջարկում, բայց խուսափում են իրական գործից ու պատասխանատվությունից:

Առակը բաղկացած է երկու մասից, առաջինը պատմությունն է, երկրորդը բարոյախոսությունը:

❖Լինում են չափածո և արձակ:

Աղվեսն ու վագրը
Չափածո առակ

Սա հին առակ է, բայց միտք ունի խոր,
Ուժի հետ մեկտեղ խելք է հարկավոր:

Աղվեսն ու հովազը

Առակս ցուցանե, որ խելքի նրբությունը մարմնի գեղեցկությունից լավ է:

Ուղևորներն ու սոսին

Այդպես էլ որոշ մարդկանց բախտը չի բերում.նրանք լավություն են անում մերձավորներին,բայց շնորհակալություն չեն ստանում:

ԱՌԱԿԱԳԻՐՆԵՐ

Եզոպոս

Վարդան Այգեկցի

Մխիթար Գոշ

Խաչատուր Աբովյան

Ավետիք Իսահակյան

Խնկո Ապեր

Հովհաննես Շիրազ

Լեսսինգ

Ժան Դը Լաֆոնտեն

Իվան Կռիլով

ՔՐԻՍՏՈՍԻ ՎՈՒԱԿԵՐԸ

Հիսուս Քրիստոսն իր միտքն առավել հասկանալի դարձնելու նպատակով հաճախ խոսում էր առակներով:
Հիսուսի առակները իրական կյանքից վերցված պատմությունն եր են:

Սերմնացանի առակը

Առակն այս է նշանակում, որ սերմն Աստծու խոսքն է,որն իր մեջ կրում է ճշմարիտ ու հոգևոր կյանքի սկիզբը: Արտը՝ ողջ մարդկությունն է, որն իր մեջ է ընդունում այդ հրաշագործ սերմը, սակայն, օժտված լինելով թաքնված կենդանի ուժով՝ Աստծու խոսքը միշտ նույն արդյունքը չի ունենում:

Եզոպոսը համաշխարհային առակագրության Խոշորագույն դեմքերից է: Նրա առակներով է պայմանավորված համաշխարհային գրականության մեջ առակագրության՝ որպես առաջին ժանրի զարգացումը:

Գյուղացին և իր որդիները
Առակս ցուցանե.
Որքան անհաղթելի է համերաշխությ ունը, նույնքան անզոր է պառակտումը:

Իվան Կռիլով

Երբ ընկերները համերաշխ չեն
Օգուտ չկա բռնած գործից…

Մխիթար Գոշ
Միջնադարյան հումանիզմի խոշոր ներկայացուցիչներից է, գիտնական, օրենսգիր, դավանաբան, մատենագիր, առակագիր: Գոշի «Գիրք Դատաստանի» երկը իրավունքի բացառիկ հուշարձան է հայ *իրականության մեջ, իսկ առակների ժողովածուն՝ առաջին արձակ* գեղարվեստական ստեղծագործությունը հայ գրականության մեջ:

Մխիթար Գոշը միջնադարյան հումանիզմի խոշոր ներկայացուցիչներից է, գիտնական, օրենսգիր, դավանաբան, մատենագիր, առակագիր: Գոշի «Գիրք Դատաստանի» երկը իրավունքի բացառիկ հուշարձան է հայ իրականության մեջ, իսկ առակների ժողովածուն՝ առաջին արձակ գեղարվեստական ստեղծագործությունը հայ գրականության մեջ:

Վարդան Այգեկցի

Հովհաննես Շիրազ

Ափրդիկ կաս, որոնք վրվու րի նման
Միշտկյ անքի ծովի երեսն են ել նու մ:

Բայց խորքում որքան
Մարգարիտնե ր կան,
Որոնց փառքը դեռ
Փրփուրն է խլում:

Աշխարհին նայենք պայծառ հայացքով:
Լավության համար միշտ շնորհակալ լինենք:
Երբեք չարհամարհենք մեզնից թույլերին:
Բարությունը միշտ կիշխի գեղեցկությանը
Ինչքան մարդու մեջ բարություն կա, այնքան նրա մեջ կյանք կա
Մեզնից հեռու վանենք ագահության որդը:Ագահությունը բոլոր չարիքների արմատն է
Որևէ գործ ձեռնարկելիս խորհենք, խորհրդակցենք փորձառու մարդու հետ:
Մարդու մեջ ինչ մեծություն կա, աշխատանքի գործն է, իսկ քաղաքակրթությունն էլ աշխատանքի պտուղն է

Եզրակացություն

Առակը ժողովրդական բանահյուսության ամենասիրելի և դյուրըմբռնելի տեսակներից է, որում ներկայացվում են ժողովրդի մտածելակերպը, սովորությունները, չարի ու բարու, լավի ու հավատի մասին պատկերացումները: Նրանում արտացոլվել են հասարակական ու սոցիալական կյանքում եղած բազմաթիվ երևույթներ, բացահայտվել մարդկային հոգու և մտքի տվայտանքները, հեգնել երկրի հոգևոր ու աշխարհիկ տերերին, արտահայտել երջանիկ կյանքի երազանքը: Առակներում այլաբանորեն, կենդանական, բուսական աշխարհի միջոցով, ներկայացվում են մարդկային կյանքի որոշակի կողմեր, գովերգում են լավը և քննադատում՝ վատը:

Ինչպես նշեցինք հետազոտության սկզբում, մեր նպատակն է առակների դասավանդումը ներկայացնել նորովի, այսինքն ինտերակտիվ մեթոդներով և ևս մեկ անգամ արժևորել դրանց դերը երեխաների մեջ ժողովրդավարական արժեհամակարգի ձևավորման հարցում: Առակների դաստիարակչական, բարոյախրատական նշանակությունը հաշվի առնելով՝ կարելի է պնդել, որ նրանք մինչ այժմ պահպանել են իրենց արդիականությունը և դաստիարակչական հզոր զենք են ուսուցչի ձեռքին: